Doi: 10.56737/2953-7843-2025.04-110

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ
*Պատմական գիտ. թեկնածու,*
*Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարան*

# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (2000–2021)[1]


## ՄՈՒՏՔ

*ՀՀ Վայոց ձորի մարզը կազմավորվել է 1995 թվականին։ Մարզն իր անունն ստացել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի (աշխարհ) Վայոց ձոր գավառի անունից։ Մարզը ներառում է Եղեգնաձորի եւ Վայքի նախկին վարչական շրջանները։ Վայոց ձորի մարզը բնակչության թվով ամենափոքր, ամենանոսր բնակեցված եւ ամենաքիչ թվով բնակավայրեր ունեցող մարզն է։ Վայոց ձորի տարածքը շուրջ 2308 քառ. կմ է եւ կազմում է ՀՀ տարածքի շուրջ 7,7%-ը։ Մարզկենտրոնն է Եղեգնաձոր քաղաքը։ Մարզն ունի 3 քաղաքային (Եղեգնաձոր, Ջերմուկ, Վայք) եւ 52 գյուղական բնակավայր (ընդամենը՝ 55 բնակավայր)։ Վայոց ձորի մարզում է գտնվում ՀՀ-ի ամենագեղեցիկ՝ Ջերմուկի կամ «Ջրահարսի վարսեր» ջրվեժը։ Սեւանա լճի մակարդակի անկումը կանգնեցնելու նպատակով կառուցվեց 48,3 կմ երկարությամբ Արփա–Սեւան ստորգետնյա ջրատարը (1963–1981 թթ.), որը սկիզբ է առնում Կեչուտի ջրամբարից, իսկ ապա նաեւ Որոտան-Արփա ջրատարը՝ 21,6 կմ երկարությամբ (կառուցումն ավարտվել է 2004 թ.)։*

*Վայոց ձորի մարզը հյուսիսից սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հյուսիս-արեւելքից՝ Արցախին, հարավ-արեւելքից՝ Սյունիքի մարզին, հարավից՝ Նախիջեւանին, արեւմուտքից՝ Արարատի մարզին։*

*Մարզի ամենամեծ քաղաքը մարզկենտրոն Եղեգնաձորն է։*

*Մարզի տարածքը կազմում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Վայոց ձորի թեմը, որը հիմնվել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի սրբատառ կոնդակով 2010 թ. դեկտեմբերի 10-ին, երբ Վայոց ձորի մարզը դուրս է բերվել Սյունյաց թեմի կազմից եւ դարձել առանձին թեմ։ Թեմի առաջնորդանիստը մարզկենտրոն Եղեգնաձորի Ս. Աստվածածին*


---

[1]* *Ստացվել է՝ 28.04.2025, գրախոսվել է՝ 5.05.2025։*
*Էլ. հասցե՝* armanmaloyan@mail.ru, armanmaloyan1976@gmail.com:

*եկեղեցին է[2]։ Վայոց ձորի թեմի առաջնորդն է Գերաշնորհ Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը (2010 թ. դեկտեմբերի 10-ից առ այսօր), իսկ թեմի փոխառաջնորդն է Նորավանքի վանահայր Տեր Զարեհ վարդապետ Կաբաղյանը (2012 թվականից առ այսօր)։*

## ՎԱՅՔԻ Ս. ՏՐԴԱՏ ԵԿԵՂԵՑԻ

*Վայքի Ս. Տրդատ եկեղեցին անվանակոչվել է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակած Հայոց մեծագործ արքա եւ Հայ Առաքելական Եկեղեցու սրբերի շարքը դասված Տրդատ Գ. Մեծի պատվին։*

*Վայքում եկեղեցի կառուցելու ծրագիրը կար դեռեւս 1990 թվականից։ Հոգելույս Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք կատարվել էր եկեղեցու հիմնարկեքի արարողությունը՝ Սյունյաց թեմի բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ Տեր Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանի ձեռքով[3], սակայն դրամական միջոցների բացակայության պատճառով շինարարական աշխատանքներն ընդհատվել էին։ Ս. Տրդատ եկեղեցու շինարարությունը վերսկսվեց 1998 թ.՝ ամերիկահայ բարերարներ տեր եւ տիկին Գալուստ եւ Էմմա Սողոյանների հովանավորությամբ։ Եկեղեցին կառուցվել է Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամեակի առթիվ։ Ճարտարապետը Մայր Աթոռի երկարամյա (1957–1999 թթ.) գլխավոր ճարտարապետ Արծրուն (Արծրունի) Գալիկյանն է[4]։ Կառուցման աշխատանքները վերահսկում էր ճարտարապետ Հրաչ Գասպարյանը, այնուհետեւ՝ Ռուբեն Ազատյանը եւ Սուրեն Գաթրճյանը։ Ճարտարապետական հորինվածքով՝ Ս. Տրդատ եկեղեցին քառաթեւ կենտրոնագմբեթ կառույց է, ունի մի խորան, որը նվիրված է Ս. Աստվածածնին, փոքր գավիթ, երկու ավանդատուն եւ փոքրիկ գմբեթներով երկու զանգակատուն։ Եկեղեցին լուսավորվում է գմբեթի 12 եւ եկեղեցու 24 լուսամուտների*

---

[2] *Տե՛ս* Ա. Մալոյան, Մ. Մակարյան, Օ. Դուդուիմյան, *Հայաստանի նշանավոր վանքերը եւ եկեղեցիները, էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2020, էջ 154։*

[3] *Տե՛ս Հաղորդագրություն Սյունյաց թեմից. հիմնարկեք Սուրբ Տրդատ եկեղեցվո, «Էջմիածին», ԺԱ.–ԺԲ., 1993, էջ 15։*

[4] *1957 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա. կաթողիկոսի հրավերով Գալիկյանը ստանձնել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետի պաշտոնը եւ դարձել 1956 թ. ստեղծված Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովի անդամ։ Նրա նախագծերով կառուցվել են բազմաթիվ հոյաշեն կառույցներ (տե՛ս Վարազդատ Հարությունյան, Մահ ճարտարապետ Արծրուն Գալիկյանի, էջմիածին, է. –Ը., 2004, էջ 181–82)։*

*շնորհիվ, բացի դրանցից՝ եկեղեցին լուսավորվում է նաեւ մեկ մեծ եւ չորս փոքր էլեկտրական ջահերով (հեղինակ՝ Լեւոն Պողոսյան)։ Ս. Տրդատ եկեղեցին ներսից զարդարված է չորս մեծ եւ մեկ փոքր սրբապատկերներով (պատկերված են Տրդատ Գ. Թագավորի մկրտության, Հիսուս Քրիստոսի Մկրտության եւ Հարության դրվագները, ինչպես նաեւ Ս. Գայանե եւ Ս. Հռիփսիմե կույսերը, եկեղեցու նկարչական ձեւավորումը կատարել է Ռոբերտ Կարապետյանը)[5]։*

*Եկեղեցին ունի երեք փայտաշեն դուռ (հեղինակ՝ Տիգրան Զեյթլյան)։ Արեւմտյան դուռը նվիրված է եկեղեցու բարերար Գալուստ Սողոյանին եւ կրում է հետեւյալ արձանագրությունը. «Դուռս այս յիշատակ է Գալուստ Սողոյեանի»։ Հյուսիսային դուռը նվիրված է լուսահոգի Մեսրոպ արք. Աշճյանին եւ ունի հետեւյալ արձանագրությունը. «Դուռս այս յիշատակ է Մեսրոպ արք. Աշճեանի 2000 թ.»։ Եկեղեցու հարավային դուռը նվիրված է Էմմա Թապիպյան-Սողոյանին եւ ունի հետեւյալ՝ «Դուռս այս յիշատակ է Էմմա Թապիպեան-Սողոեանի 2000 թ.» արձանագրությունը։*

*Եկեղեցու հյուսիսային կողմում գտնվում է մկրտության ավազանը, որի վրա գրված է. «Կանգնեցաւ Մկրտութեան Աւազանս ի յիշատակ Տօքթ. Ստեփան Թապիպեանի 2000 թ.»։*

*Ս. Տրդատ եկեղեցու արեւմտյան կողմում՝ կենտրոնական դռան վերեւում, ագուցված է եկեղեցու կառուցման մասին հետեւյալ արձանագրությունը. «Կառուցաւ Ս. Տրդատ եկեղեցիս արդեամբք Գալուստ եւ Էմմա Սողոյեանների ի Տիթրոյթ ԱՄՆ։ Ի Հայրապետութեանն Տ. Տ. Գարեգնի Ա. Կաթողիկոսին Ամենայն Հայոց եւ նորին յաջորդին Տ. Տ. Գարեգնի Բ. Կաթողիկոսին Ամենայն Հայոց. յառաջնորդութեան Տ. Աբրահամայ եպիսկոպոսի Սիւնեաց ի փառաւորումն 1700-ամեայ տարեդարձին քրիստոնէութեան Հայոց. Ճարտարապետ՝ Ա. Գալիկեան, Կառուցող՝ Մ. Մկրտչեան։ Ս. Սեղանս կանգնեցաւ ի յիշատակ Փառաւոն Սողոյեանի 2000 թ., կանգնեցաւ Մկրտութեան Աւազանս ի յիշատակ Տօքթ. Ստեփան Թապիպեանի 2000 թ.»[6]։*

*Վայքի Ս. Տրդատ եկեղեցին օծվել է 2000 թ. օգոստոսի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ[7]։*

---

[5] *Տե՛ս Օծվեց Վայքի Ս. Տրդատ նորակառույց եկեղեցին, «Էջմիածին», Ը., 2000, էջ 4։*

[6] *Վայքի Ս. Տրդատ եկեղեցի //* https://vayotsdzoritem.com/category/թեմի-լրատվության-բաժին/page/352 *առ 07.07.2023 թ.։*

[7] *Տե՛ս Օծվեց Վայքի Ս. Տրդատ նորակառույց եկեղեցին, Էջմիածին, Ը., 2000, էջ 3։*

*Ս. Տրդատ եկեղեցին ունի չորս խորշ, որոնցից մեկում՝ եկեղեցու արեւմտյան դռան ձախ կողմում, տեղադրված է Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակի խաչքարը։ Եկեղեցին շրջապատված է պտղատու եւ զարդական ծառերով։ Եկեղեցու տարածքում է գտնվում նաեւ Վայոց ձորի թեմի փոխառաջնորդարանը, որը նույնպես կառուցվել է Գալուստ եւ Էմմա Սողոյանների բարերարությամբ։*

*2014 թ. մայիսի 25-ին Վայքի Ս. Տրդատ եկեղեցու բակում կատարվել է Ս. Հարություն խաչքար-հուշակոթողի օծման կարգը[8]։ Այդ շատ ինքնատիպ եւ գեղակերտ խաչքար-հուշակոթողն իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի հավաքականության, միասնականության խորհուրդը եւ ներկայացնում է հայոց պատմության տարբեր ժամանակներում ու տարբեր տարածաշրջաններում ստեղծված խաչքարերի կրկնօրինակներ։ Հուշարձանը խորհրդանշում է հայ ազգի միասնությամբ բռունցքվելը, բյուրեղացումը, զորեղացումն ու հավերժականությունը։*

*Վայքի Ս. Տրդատ եկեղեցու Սուրբ Հարություն խաչքար-հուշակոթողը։ Հեղինակ՝ խաչքարագործ-վարպետ Վարազդատ Հարությունյան։*

*Նշյալ օրը Ս. Տրդատ եկեղեցում նախ մատուցվեց սուրբ եւ անմահ պատարագ։ Պատարագիչն էր Վայոց ձորի թեմի փոխառաջնորդ, հոգեշնորհ Տեր Զարեհ վրդ. Կաբաղյանը։ Այնուհետեւ կատարվեց խաչքար-հուշակոթողի օծման կարգը, որին ներկա էին Շիրակի թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Միքայել եպս. Աջապահյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից ուխտավորաբար Հայաստանում գտնվող Գերաշնորհ Տեր Գեղամ արք. Խաչերյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գերաշնորհ Տեր Գեւորգ եպս. Սարոյանը, Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը, մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, քաղաքապետեր եւ համայնքապետեր, ճեմարանի ավարտական լսարանի սաներ, հյուրեր ԱՄՆ-ից, Ռուսաստանի Դաշնությունից, Կանադայից, բազմաթիվ ուխտավորներ Արցախից ու Հայաստանի տարբեր մարզերից։ Առաջինը թեմական առաջնորդ, Գերաշնորհ Տեր Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը սրբալույս մյուռոնով օծեց խաչքարը, ապա մյուս սրբազան հայրերը եւս օծեցին խաչքարը։ Օծումից հետո նախ օրհնության խոսքով հանդես եկավ թեմական*

---

[8] *Տե՛ս «Ս. Հարություն» խաչքար-հուշակոթողի բացում / 25.05.14 /Վայոց ձոր /Վայք/ Ս. Տրդատ եկեղեցի //* https://www.youtube.com/watch?v=j3yFp3x7n7o

*առաջնորդ Աբրահամ սրբազանը, հավաստագիր հանձնեց խաչքար-հուշակոթողի բարերար Գրիգոր Պուշկինի Գրիգորյանին, այնուհետեւ ներկաներին մեկնաբանեց խաչքարի խորհուրդը, որը կանգնեցված է ազգի օրհնության եւ պահպանության նպատակով։ Ապա ելույթներով հանդես եկան Գեղամ սրբազանը, մարզպետ Է. Ղազարյանը, Վայքի քաղաքապետ Հարություն Սարգսյանը, կոթողի հեղինակ, քանդակագործ Վարազդատ Հարությունյանը, 2013 թ. Վայքի Ս. Տրդատ եկեղեցու խաչքավոր, Ս. Հարություն խաչքար-հուշակոթողի բարերար Գ. Գրիգորյանը։ Տեղի ունեցավ նաեւ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանի «Խաչքար» գրքի շնորհանդեսը։ Գրքի բարերարը եւս Գ. Գրիգորյանն էր։ Աշխատության հեղինակ Պետրոսյանը հանգամանորեն ներկայացրեց իր հեղինակած գործը, որի բազում օրինակներ նվիրվեցին եկեղեցու բակում հավաքվածներին։*

*Վայքի Ս. Տրդատ եկեղեցու ուխտի օրը եկեղեցու օծման օրն է՝ օգոստոսի 6-ը, ինչպես նաեւ Հոգեգալստյան 5-րդ կիրակիին նախորդող շաբաթ օրը, երբ Հայոց Եկեղեցին նշում է Ս. Տրդատ թագավորի, Ս. Աշխեն թագուհու եւ Ս. Խոսրովիդուխտ կույսի հիշատակը։*

## ՋԵՐՄՈՒԿԻ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻ

*Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցին կառուցվել է 2007 թ.՝ ՀՀ ազգային ժողովի պատգամավոր, գործարար, «Ջերմուկ Գրուպ» ընկերության սեփականատեր, ծնունդով գնդեվազցի Աշոտ Արսենյանի[9] եւ Արսենյան եղբայրների հովանավորությամբ։ Եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր դեռեւս 1999 թ. մայիսի 15-ին[10]։ Ս. Գայանե եկեղեցու հիմնարկեքը՝ 16 քարերը օրհնելու եւ օծելու հանդիսավոր արարողությունը, կատարել էին Սյունյաց թեմի բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ Տեր Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը, Երուսաղեմի հայոց պատրիարք, Ամենապատիվ Տեր Թորգոմ արք. Մանուկյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Զավեն արք. Զինչինյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Գիսակ արք. Մուրադյանը։ Ս. Գայանե եկեղեցին*

---

[9] *Տե՛ս «Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը Աշոտ Արսենյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգեւատրելու մասին», «Էջմիածին», ԺԱ., 2007, էջ 65–66։*

[10] *Տե՛ս* Բ. Քոջարյան, *Ջերմուկում հիմքը դրվեց նոր եկեղեցու, «Էջմիածին», Ե.–Զ., 1999, էջ 151։*

*օծվել է 2007 թ. նոյեմբերի 17-ին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ[11]։*

*Ս. Գայանե եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Սամվել Աղաջանյանի նախագծով։ Եկեղեցին պարզ գմբեթավոր փոքրիկ կառույց է, ունի մեկ խորան, մկրտության ավազան, երկու ավանդատուն, երկու փայտաշեն դռներ՝ արեւմտյան եւ հարավային կողմերում։ Եկեղեցին լուսավորվում է գմբեթի 12 եւ եկեղեցու 8 նեղ ու փոքրիկ լուսամուտների ու մեկ մեծ ջահի շնորհիվ։ Եկեղեցին ներսից զարդարված է վեց մեծ սրբապատկերներով (Քրիստոսի խաչելության, հայոց դարձի տեսարան, Աստվածածնի եւ Ս. Գայանե կույսի պատկերներ)։ Գմբեթի վեղարի ու չորս սյուների միջեւ տեղավորված որմնանկարներում պատկերված են չորս ավետարանիչները, իսկ գմբեթի մեջ գրված է. «Փառք Քեզ Տեր Աստված մեր, որ լսեցիր մեր աղոթքը»[12]։*

## ԿԵՉՈՒՏԻ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ՄԱՏՈՒՌ

*Ջերմուկ քաղաքի վարչական սահմանների մեջ ներառված Կեչուտ գյուղում՝ հենց ջրամբարի ափին, 2007 թ. կառուցվել է մատուռ՝ Ս. Գայանե, որն օծվել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով նոյեմբերի 17-ին[13], այսինքն, հենց այն նույն օրը, երբ օծվել է Ջերմուկի նույնանուն եկեղեցին։ Ս. Գայանե մատուռը գմբեթավոր է, ունի մեկ խորան, մկրտության ավազան։ Մուտքն արեւմտյան կողմից է։ Մատուռը լուսավորվում է 9 փոքրիկ լուսամուտների շնորհիվ։ Մատուռի օծման արարողությունից հետո Հայոց կաթողիկոսը մեկնել է Ջերմուկ, ապա եւ կատարել Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցու օծման արարողությունը։ Ս. Գայանե մատուռը կառուցվել է ճարտարապետ Լեւոն Օհանյանի նախագծով, կառուցող վարպետը Յուրի Առաքելյանն է։ Մատուռի կառուցման հովանավորը Ալիկ Հովհաննիսյանն է[14]։*

*Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցու եւ Կեչուտի Ս. Գայանե մատուռի ուխ-*

---

[11] *Տե՛ս «Ամենայն Հայոց Կաթողիկոսը օծեց Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցին», «Էջմիածին», ԺԱ., 2007, էջ 150։*

[12] https://vayotsdzoritem.com/2012/11/03/ջերմուկի-սուրբ-գայանե-եկեղեցի-2/ *առ 03.07.2023 թ.։*

[13] *«Տե՛ս Ամենայն Հայոց Կաթողիկոսը օծեց Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցին», «Էջմիածին», ԺԱ., 2007, էջ 150;* https://vayotsdzoritem.com/2012/09/15/կեչուտի-սուրբ-գայանե-մատուռ/ *առ 03.07.2023 թ.։*

[14] https://vayotsdzoritem.com/2012/09/15/կեչուտի-սուրբ-գայանե-մատուռ/ *առ 03.07.2023 թ.։*

տի օրերն են՝ օծման օրը՝ նոյեմբերի 17-ը եւ Ս. Գայանե կույսի հիշատակման օրը, որը Հայ Առաքելական Եկեղեցին տոնում է Կաթուղիկե Ս. Էջմիածնի տօնի[15] նախընթաց երեքշաբթի օրը։

## ՄԱԼԻՇԿԱՅԻ Ս. ԱՆՆԱ ԵԿԵՂԵՑԻ

Վայոց ձորի մարզի նորակառույց եկեղեցիներից է Մալիշկա գյուղի Ս. Աննա եկեղեցին։ Ս. Աննա եկեղեցու կառուցումը հովանավորել է հայ գործարար, «Ռուսաստանի հայերի միություն» ՀԿ նախագահ Արա Աբրահամյանը[16]։ Բարձունքին փառահեղ բազմած նորակառույց եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1997 թ.։ Բազալտակերտ եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Արծրուն Գալիկյանի նախագծով։ Ս. Աննա եկեղեցին միախորան կենտրոնագմբեթ քառաթեւ կառույց է՝ զույգ ավանդատներով, որոնցից մեկը մոմավառության համար է օգտագործվում։ Ունի երկու մուտք՝ եկեղեցու արեւելյան ու հարավային կողմերից։

Ս. Աննա եկեղեցին ներսից գրեթե ամբողջովին զարդարված է որմնանկարներով։ Խորանի վերեւում՝ պատի վրա, պատկերված է Ս. Հոգու աղավնակերպ էջքի տեսարանը, իսկ գմբեթը պահող չորս կամարների անկյուններում պատկերված են Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննես ավետարանիչները։ Եկեղեցու պատերը զարդարում են Հիսուս Քրիստոսի ծնունդը, մկրտությունը, խաչելությունը, Քրիստոսի հարության հրեշտակական ավետումը, ինչպես նաեւ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալներին, հայոց դարձը, գրերի գյուտը եւ Լուսավորչի տեսիլքը պատկերող որմնանկարները։ Եկեղեցու ներքին հարդարանքին առանձնակի շուք է հաղորդում Աստվածածնի մոր՝ սուրբ Աննայի որմնանկարը։

Եկեղեցին լուսավորվում է գմբեթի ութ եւ եկեղեցու երեսուն լուսամուտների, ինչպես նաեւ հինգ էլեկտրական ջահերի շնորհիվ։

Մալիշկայի Ս. Աննա եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է 2000 թ. նոյեմբերի 4-ին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ սրբազան հայրերի։ Արարողությանը մասնակցելու նպատակով Մալիշկա էին ժամանել ՀՀ ԱԺ նախագահ Արմեն

---

[15] Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի տոնը նվիրված է Ս. Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրմանը եւ նշվում է Ս. Հարության տոնից՝ Զատկից, 9 շաբաթ (63 օր) հետո կամ Հոգեգալստյան կիրակին հաջորդող երկրորդ Կիրակի օրը։

[16] Տես «Ձեռամբ Վեհափառ հայրապետի օծվեց Մալիշկայի Ս. Աննա եկեղեցին», «Էջմիածին», ԺԱ., 2000, էջ 55։

*խաչատրյանը, Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը, «Ռուսաստանի հայերի միության» պատվիրակությունը, ՌԴ պետդումայի փոխխոսնակ Արթուր Չիլինգարովը, մեծաթիվ հյուրեր ու բազմահազար ժողովուրդ։*

*Վեհափառ հայրապետը Ս. Աննա եկեղեցուն նվիրել է Ս. Հոգու խորհրդանիշ մյուռոնաթափ աղավնի։ Սրբազան արարողության ավարտին կատարվել է մկրտություն։ Եկեղեցու բակում կատարվել է նաեւ ծառատունկ, որը կազմակերպել էր «Հայաստան-ծառ» ամերիկահայ կազմակերպությունը[17]։*

*Ս. Աննա եկեղեցին շրջապատված է պտղատու եւ զարդական ծառերով։ Եկեղեցու բակում կանգնեցված է հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությունը հավերժացնող աղբյուր-հուշարձան՝ հայերեն եւ ռուսերեն արձանագրությամբ։*

*Եկեղեցու տարածքում գործում է հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանը։*

*Մալիշկա գյուղի Ս. Աննա եկեղեցու անվանակոչության օրը նշվում է Աստվածամոր ծնողների եւ Յուղաբեր կանանց հիշատակության օրը[18], մատուցվում է սուրբ պատարագ։*

## ԱՂԱՎՆԱՁՈՐԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

*Վայոց ձորի մարզի հաջորդ նորակառույց քրիստոնեական պաշտամունքային կառույցը Աղավնաձոր գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին է։*

*Աղավնաձորի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման նախաձեռնողը Մոսկվայում բնակվող աղավնաձորցի գործարար Մուրադ Սարգսյանն է։ Եկեղեցու հիմնարկեքը 2000 թ. փետրվարին կատարել է Սյունյաց թեմի բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ Տեր Աբրահամ եպս. Մկրտչյանը[19]։ Գյուղի բարձունքին վեհորեն բազմած Ս. Աստվածածին եկեղեցին քառաթեւ կենտրոնագմբեթ փոքրածավալ կառույց է։ Եկեղեցու ճարտարապետը Սարգիս Գուրզադյանն է։*

---

*[17] «Տե՛ս Ձեռամբ Վեհափառ հայրապետի օծվեց Մալիշկայի Ս. Աննա եկեղեցին», «Էջմիածին», ԺԱ., 2000, էջ 55։*

*[18] Հայ Առաքելական Եկեղեցին Աստվածածնի ծնողների՝ Հովակիմի եւ Աննայի հիշատակը տոնում է Յուղաբեր կանանց հետ՝ Ս. Աստվածածնի վերափոխման իննօրյակին անմիջապես հաջորդող երեքշաբթի օրը։*

*[19] Տե՛ս «Աղավնաձորում օծվեց Ս. Աստվածածին մատուռը», «Էջմիածին», Զ.–Է., 2001, էջ 32։*

*Եկեղեցու օծման արարողությունը կատարվել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ 2001 թ. հուլիսի 7-ին։ Այդ օրը սրբալույս մյուռոնով նախ օծվեց եկեղեցու գմբեթին տեղադրված խաչը, ապա Վեհափառ հայրապետի հանդիսապետությամբ աղոթքի եւ շարականների երգեցողությամբ կատարվեց նաեւ եկեղեցու խորանին տեղադրված խաչքարի օծումը։*

*Եկեղեցու օծման արարողությունից հետո տեղի ունեցավ տոնախմբություն, որի ընթացքում ներկաներին շնորհավորանքի խոսքեր ասաց նավակատիքի առթիվ Աղավնաձոր ժամանած ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, ապա Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Վայոց ձորի մարզպետ Պանդուխտ Մանուկյանը, Ռուսաստանի հայերի միության անունից՝ Սեդա Վերմիշեան եւ ուրիշներ[20]։*

## ՄԱՐՏԻՐՈՍԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

*Վայոց ձորի մարզի նորակառույց եկեղեցիներից է Մարտիրոս գյուղի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին, որը գտնվում է 1866 թ. կառուցված Ս. Աստվածածին (հայտնի է նաեւ «Ս. Երրորդություն «Երկրորդ Երուսաղեմ» կամ «Ս. Վկայարան Երկրորդ Երուսաղեմ» անուններով) բազիլիկ եկեղեցու բակում։ Կառուցվել է ամերիկաբնակ Թագուհի Զիլյանի հովանավորությամբ[21]։ Նորակառույց եկեղեցին օծվել է 2004 թ.։*

## ԳՆԴԵՎԱԶԻ Ս. ԵՂԻՇԵ ՄԱՏՈՒՌ

*Վայոց ձորի մարզի նորակառույց քրիստոնեական պաշտամունքային կառույցներից է Գնդեվազի Ս. Եղիշե մատուռը։ Այն կառուցվել է ճարտարապետ Սամվել Աղաջանյանի նախագծով եւ Սամվել Արսենյանի բարերարությամբ։*

*Ս. Եղիշե մատուռի օրհնության կարգը 2013 թ. սեպտեմբերի 13-ին կատարել են Ջերմուկի տարածաշրջանի հոգեւոր հովիվ, արժանապատիվ Տեր Գալուստ քահանա Սահակյանը եւ Վայքի տարածաշրջանի հոգեւոր հովիվ, արժանապատիվ Տեր Մարտիրոս ավագ քահանա Ավետիսյանը՝*

---

[20] *Տե՛ս նույն տեղում։*

[21] *Հովանավորի եւ եկեղեցու կառուցման հանգամանքների մասին մանրամասն տե՛ս Նվիրաբերվելը փրկություն է, Բնորրան, 1–3 (14–16), 2001–2003, էջ 240 կամ* http://bnorran.am/?p=466 *առ 15.07.2023 թ.։ Եվս մի կոթող* - https://www.aravot.am/2001/06/20/791889/ *առ 15.07.2023 թ.։*

*Գագիկ սարկավագ Հակոբյանի սպասավորությամբ։ Օրհնության արարողությունը նախագահում էր Վայոց ձորի թեմի փոխառաջնորդ, հոգեշնորհ Տեր Զարեհ վրդ. Կաբաղյանը[22]։*

## ԵԼՓԻՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

*Մարզի նորակառույց եկեղեցիներից է Ելփին գյուղում կառուցված Ս. Սարգիս եկեղեցին։ Այն նախագծել է ճարտարապետ Սամվել Աղաջանյանը, իսկ կառուցումը նախաձեռնել եւ հովանավորել է ծնունդով ելփինցի գործարար, բարերար Սամվել Ավետիսյանը, որը բնակվում է Ռուսաստանի Նախոդկա քաղաքում։ 2005 թ. կառուցված եկեղեցու օծումը կատարվել է 2006 թ.[23]։*

## ՌԻՆԴԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

*Վայոց ձորի մարզի նորակառույց եկեղեցիներից է Ռինդի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին։ Եկեղեցու հիմնարկեքի հանդիսավոր արարողությունը կատարվել է 2014 թ. ապրիլի 28-ին։ Այդ օրը Վայոց ձորի թեմի բարեխնամ առաջնորդ, գերաշնորհ Տեր Աբրահամ արք. Մկրտչյանի ձեռամբ սրբալույս մյուռոնով օծվեցին եւ Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու հիմքում տեղադրվեցին տասնվեց վիմաքարերը։*

*Հավարտ հիմնարկեքի արարողության՝ ներկայացվեց համերգային ծրագիր, ելույթ ունեցան երգի ու պարի համույթներ։ Ներկաներին ուղղված խոսքով հանդես եկան ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը, Ռինդի համայնքապետ Հուսիկ Սահակյանը, եկեղեցու բարերար Վարդան Սարգսյանը եւ իր մայրը՝ Ռինդի միջնակարգ դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի Ռոզա Կարապետյանը[24]։ Բացի եկեղեցու կառուցման հիմնական բարերարից՝ Ռինդ համայնքի ղեկավար Սահակյանի ջանքերով համայնքի բնակչությունը դրամահավաքի միջոցով, ինչպես նաեւ տեղացի*

---

[22] *Սբ Եղիշե մատուռի օրհնությունը Գնդեվազ գյուղում* - https://vayotsdzoritem.com/2013/09/13/սբ-եղիշե-մատուռի-օրհնությունը-գնդեվա/, http://blog.ecolur.org/2013/09/սբ-եղիշե-մատուռի-օրհնությունը-գնդեվա/ *առ 07.07.2023 թ.։*

[23] *Վայոցձորցի գործարարները եկեղեցիներ ու մատուռներ են կառուցում* – https://hetq.am/hy/article/67651 *առ 15.07.2023 թ.։*

[24] *Տե՛ս ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցեց Ռինդ համայնքում կռուցվելիք եկեղեցու հիմնարկեքին* – http://vdzor.mtad.am/news/item/2014/04/28/491/ *առ 15.07.2023 թ.։ Նաեւ՝ Սիրան Սարգսյան, Եկեղեցու հիմնարկեքի օրհնության կարգ Ռինդ համայնքում* – https://vayotsdzoritem.wordpress.com/2014/04/28/եկեղեցու-հիմնարկեքի-օրհնության-կարգ/ *առ 15.07.2023 թ.։*

*գործարար Սահակ Սարգսյանը, նույնպես մասնակցել են եկեղեցու կառուցման աստվածահաճո գործին։*

*Ռինդի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է 2021 թ. սեպտեմբերի 13-ին, ձեռամբ Վայոց ձորի թեմի բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ Տեր Աբրահամ արք. Մկրտչյանի։ Հանդիսավոր արարողության ավարտին սրբազան հայրը Ռինդի բնակիչներին, եկեղեցու բարերարներին ու ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հայրապետական օրհնությունը։ Եկեղեցու նավակատյաց հանդեսին ներկա էին Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը, Արենի համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանը, եկեղեցու կառուցման հովանավորներ, բարերարներ Վարդան եւ Սահակ Սարգսյանները, մեծաթիվ հյուրեր։ Այնուհետեւ հանդիսությունը շարունակվեց սիրված երգիչներ Աղասի Իսպիրյանի եւ Գոհար Հովհաննիսյանի, ինչպես նաեւ համայնքի շնորհալի երեխաների գեղեցիկ երաժշտական ու պարային կատարումներով[25]։*

*Վայոց ձորի մարզի նորակերտ եկեղեցիները հիմնականում կառուցվել են տեղական շինանյութով՝ տուֆ, բազալտ, ավազաքար, համայնքների կենտրոնական կամ շրջապատի նկատմամբ իշխող բարձրադիր ու ազդու տեղանքում։ Եկեղեցիների հյուրընկալ դռները միշտ բաց են ցերեկվա ժամերին, գոցվում են երեկոյան։ Նորակառույց եկեղեցիներից մնայուն քահանա ունեցող եկեղեցիներն են. Վայքի Ս. Տրդատ եկեղեցին եւ Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցին, որտեղ որպես խորհրդակատար հոգեւորականներ քահանայագործում են համապատասխանաբար Տեր Սեպուհ քահանա Հարությունյանը եւ Տեր Գալուստ քահանա Սահակյանը։ Մարզի հավատավոր բնակչության հոգեւոր պահանջմունքների գոհացման եւ համայնքների հոգեւոր-մշակութային ու հասարակական կյանքի զարգացման գործում իրենց գնահատելի ներդրումն են ունեցել Եղեգնաձորի Ս. Աստվածածին եկեղեցու եւ Եղեգնաձորի տարածաշրջանի հոգեւոր հովիվ արժանապատիվ Տեր Վազգեն քահանա Հովհաննիսյանը (այժմ՝ Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգեւոր հովիվ),*

---

[25] *«Նորակառույց Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու օծման արարողությունը Ռինդ բնակավայրում»՝* http://vdzor.mtad.am/news/item/2021/09/13/4416/ *առ 27.10.2021. նաեւ՝ Դարեր շարունակ հայ ժողովուրդը յաղթել է զէնքով ու հաւատով». Ռինդում կայացաւ նորակառույց Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու օծման արարողությունը»՝* https://www.aravot.am/2021/09/14/1215422/ *առ 27.10.2021։*

*Եղեգնաձորի Ս. Աստվածածին եկեղեցու ծիսակատար քահանաներ Տեր Ներսես քահանա Աշուղբաբյանը, Տեր Հովհաննես քահանա Մաթեւոսյանը (նաեւ՝ Խաչիկ համայնքի հոգեւոր հովիվ եւ ՀՀ Զինված ուժերի գնդերեց), Նորավանքի հոգեւոր հովիվ ու վանահայր Հայր Զարեհ վարդապետ Կաբաղյանը, Նորավանքի խորհրդակատար քահանա Տեր Ներսես քահանա Արշակյանը։ Ինչպես նշեցինք, Վայոց ձորի թեմի վերոհիշյալ եւ նրանցից առաջ քահանայագործած Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալ հոգեւորականները (Տեր Կոմիտաս քահանա Տիգրանյան, Տեր Սահակ քահանա Մարտիրոսյան եւ այլք) ներգրավված են եղել ու իրենց գործուն մասնակցությունն են ունեցել մարզի հասարակական ու ներհամայնքային կյանքի տարբեր ոլորտներում իրականացված աշխատանքներին։ Այսպես, դեռեւս 2012 թ. հոկտեմբերին ՀՀ-ի ամբողջ տարածքում, նաեւ Վայոց ձորի մարզի մի շարք դպրոցներում անցկացվեցին Հայոց գրերի գյուտին, թարգմանչությանը եւ հայ տպագրության 500-ամյակին նվիրված միջոցառումներ, որոնց մասնակցում էին նաեւ Վայոց ձորի թեմի հոգեւորականները։ Մասնավորապես Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Գալուստ քհն. Սահակյանը ներկա էր Ջերմուկի հ. 1 հիմնական դպրոցում կազմակերպված միջոցառմանը, որի ընթացքում շնորհաշատ սովորողները հրաշալի ներկայացրին Հայոց գրերի գյուտից մինչեւ հայ գրքի տպագրությունն (405–1512 թթ.) ընկած ժամանակահատվածը՝ անդրադառնալով այդ իրադարձությունների ականավոր ներկայացուցիչների գործունեությանը, գրիչների, ընդօրինակողների անուրանալի աշխատանքին, որի շնորհիվ հայագիր Աստվածաշունչ, Նարեկ ու բազում այլ մատյաններ ունեցանք, որոնք բազմացվեցին, պահպանվեցին ու փոխանցվեցին մեզ։ Միջոցառմանը ներգրավված էին շուրջ 46 երեխաներ տարբեր դասարաններից (2-րդից 10-րդ)։ Համայնքի հոգեւոր հովիվ Տ. Գալուստ քհն. Սահակյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրեն տիկին Լ. Բաղդասարյանին եւ ուսուցչական անձնակազմին՝ մատաղ սերնդին հայոց պատմության կարեւոր իրադարձություններին հաղորդակից դարձնելու համար՝ միաժամանակ կարեւորելով դպրոցում նմանատիպ ուսանելի, դաստիարակչական միջոցառումների դերը։ Միջոցառումն ավարտվեց Տեր հոր կողմից երեխաների օրհնությամբ*[26]։

---

[26] *Տե՛ս Տեր Գալուստ քահանա Սահակյան, Գրից մինչեւ գիրք. միջոցառում Ջերմուկի 1-ին հիմնական դպրոցում՝* https://vayotsdzoritem.wordpress.com/2012/11/29/գրից-մինչեվ-գիրք-

*Մարզում կազմակերպվող շատ ազդեցիկ, տպավորիչ ու գեղեցիկ միջոցառումներից են Հայոց հաղթանակներին ու ազատամարտին, հայ հերոսներին նվիրված միջոցառումները։ Այդպիսի մի միջոցառում էլ կազմակերպվել էր Ջերմուկի 1-ին դպրոցում՝ նվիրված Արցախյան ազատագրական պայքարի ընթացքում զոհված ջերմուկցի ազատամարտիկների հիշատակին։ Ելույթ ունեցան հյուրեր, զոհված ազատամարտիկների դասընկերներ, ապա օրհնության խոսքով հանդես եկավ Տեր Գալուստ քահանա Սահակյանը, որ շնորհակալություն հայտնեց զոհված ազատամարտիկների ծնողներին, որ այսպիսի հերոս զավակներ են պարգեւել մեր ազգին ու Հայրենիքին։ Տեր հայրը կոչ արեց, որ միշտ արթուն կերպով կարողանանք պահել մեր երկիրը եւ թշնամուն երբեւէ հաջողության եւ ուրախության առիթ չտանք։ «Մայիսը մեր ժողովրդի համար հաղթանակների ամիս է, եւ վստահ եմ, որ այդ հաղթանակները շարունակական կլինեն», - ամփոփելով իր խոսքը՝ նշեց Տեր Գալուստը։ Վերջում Արժանապատիվ Տեր Հայրը շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին, որ կրթության հետ նաեւ հայրենասիրական դաստիարակություն են տալիս երեխաներին։ Ապա աղոթք առաքվեց առ Աստված մեր երկրի խաղաղության եւ բանակի զորության համար[27]։*

*Ջերմուկում վերջին տարիներին մի շատ գեղեցիկ ավանդույթ է ձեւավորվել, երբ համայնքից ու շրջակա գյուղերից բանակ զորակոչվող զինակոչիկները Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցում Տեր Գալուստ քահանայի ձեռամբ Աստծու օրհնությունն ստանալուց հետո են մեկնում Հայոց բանակ ծառայության՝ համալրելով Հայրենիքի պաշտպանների կուռ շարքերը։ Այդ օրը, ձեւավորված ավանդույթի համաձայն, նորակոչիկներին նվիրվում են օրհնված խաչեր եւ աղոթագրքեր։ Նորակոչիկներին իրենց շնորհավորանքի եւ բարի ծառայության մաղթանքի խոսքերն են հղում նաեւ համայնքի բնակիչները, ծնողները, վետերանները, ոստիկանության ներկայացուցիչներն ու դպրոցականները[28]։*

---

միջոցառում-ջերմուկի-1/ *առ 15.07.2023 թ.։*

[27] *Տե՛ս Սիրան Սարգսյան, Զոհված ազատամարտիկներին նվիրված միջոցառում Ջերմուկի 1-ին դպրոցում՝* http://armchurch.info/diocese/diocese/qnhված-ազատամարտիկներին-նվիրված-միջ/ *առ 15.07.2023 թ.։*

[28] *Տե՛ս «Ջերմուկից ծառայության մեկնեց նորակոչիկների հերթական խումբը»* – https://blognews.am/arm/news/335699/jermukic-tsarayutyan-meknec-norakochikneri-hertakan-khumby-fotoreportazh.html *առ 15.07.2023 թ.։*

*Բանակ-հասարակություն կապն ամրապնդելու շրջանակներում հաճախակի են կազմակերպվում զինվոր-ծնող հանդիպումներ։*

*Այդպիսի մի հանդիպում էլ 2015 թ. նոյեմբերի 5-ին Արարատի մարզպետարանում էր կազմակերպվել, որի ընթացքում կայացավ ՀՀ Պաշտպանության նախարարության 4-րդ բանակային զորամիավորման 21 զինվորների հանդիպումը իրենց ծնողների հետ։*

*ՀՀ օրհներգից հետո զորամիավորման հոգեւոր սպասավոր Տեր Գալուստ քահանա Սահակյանը պահպանական աղոթք կարդալուց հետո ասաց, որ մեծարվում են լավագույն զինվորները՝ ծնողների ներկայությամբ, ինչը պատիվ է բերում յուրաքանչյուր ծնողի։ Ապա հոգեւոր հայրը շարունակելով նշեց, որ դարերի ընթացքում հայ ժողովուրդը երբեմն կորցրել է իր հողերն ու միասնական պետությունը՝ բանակ չունենալու պատճառով։ Այսօր մենք ունենք հզոր բանակ, որի շնորհիվ պաշտպանված են մեր Հայրենիքն ու պետականությունը[29]։*

*Եկեղեցի-հասարակություն սերտ հարաբերությունների յուրօրինակ դրսեւորումներից է ՀՀ բանակի մարտիկների համար կազմակերպվող հոգեւոր-հայրենասիրական թեմաներով զրույցներն ու քննարկումները։ Այդպիսի ուսանելի օրինակ է ՀՀ Զինված ուժերի 4-րդ զորամիավորման ավագ գնդերեց Տեր Գալուստ քահանա Սահակյանի կարդացած դասախոսությունը Հայոց բանակի կին զինծառայողների համար[30]։*

*Հայոց բանակին Հայաստանում եւ Արցախում իրենց նվիրյալ ծառայությունը բերած նախկին ու ներկա գնդերեցների սխրանքն անգնահատական չի մնացել։ Նրանց հայտնել են երախտագիտություն՝ հորդորելով նույն ոգով շարունակելու իրականացնել իրենց հոգեխնամ սպասավորությունն այս ծանրագույն պայմաններում, երբ շարունակելու են սփոփել զոհվածների հարազատներին, ոգեւորելու են վիրավորներին եւ անդադար աղոթքով հայցելու են Տիրոջից՝ գերեվարված հայորդիների շուտափույթ վերադարձը։ Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության նախարարի հրամանով Արցախի Հանրապետությունում ծավալված պատերազմական*

---

[29] *Տե՛ս «Կայացավ զինվոր-ծնող հերթական հանդիպումը»* – https://m.shamshyan.com/hy/article/2015/11/06/69699/ *առ 15.07.2023 թ.։*

[30] *Տե՛ս «4-րդ զորամիավորման ավագ գնդերեց Տեր Գալուստ քահանա Սահակյանը դասախոսություն է անցկացրել կին զինծառայողների համար»* – https://mil.am/hy/news/8255?fbclid=IwAR2DtW-0Cbnc9dwEtl6XLJOOCi-1JIZ1Gd23f8D3xkS9aRZqGiy5ZASU1ss *առ 15.07.2023 թ.։*

*գործողություններին մեծապես մասնակցելու համար 2021 թ. հունվարին մի շարք եկեղեցականներ արժանացան նախարարության պարգեւների, որոնց թվում նաեւ ավագ գնդերեց Տեր Գալուստ քահանա Սահակյանը պարգեւատրվեց «Անդրանիկ Օզանյան» մեդալով[31]։*

*Վայոց ձորի թեմի հոգեւորականությունն իր գնահատելի գործունեությամբ մասնակցել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վայոց ձորի թեմի իրականացրած բարեգործական, մարդասիրական միջոցառումներին (հատկապես՝ 2020–2021 թթ.)։ Նմանօրինակ միջոցառումներից էին Գլաձոր համայնքի անապահով ընտանիքներին եւ Եղեգնաձորի ցերեկային խնամքի կենտրոնի սաների ընտանիքներին տրամադրված նյութական-պարենային աջակցությունը, Վայոց ձորի թեմի առաջնորդ Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանի նախաձեռնությամբ եւ օրհնությամբ ու բարերար տիկին Դիանա Հաճեթյանի նյութական օժանդակությամբ, Նորավանքի ուխտի օրվան ընդառաջ, Եղեգնաձորի բժշկական կենտրոնի 23 աշխատակիցների եւ մարզի անապահով 27 ընտանիքներին տրված սննդի ծանրոցները։ Առաջնորդ Սրբազան հոր կողմից Եղեգնաձորի բժշկական կենտրոնի բոլոր հիվանդասենյակների համար նվիրաբերվել են սրբապատկերներ, իսկ այդ պահին հիվանդանոցում բուժվող հիվանդներին՝ Աստվածաշունչ։ Թեմի կողմից տրվող մարդասիրական հերթական օգնությունն է բաժանվել Եղեգնաձորի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Վազգեն քահանա Հովհաննիսյանի եւ թեմի Երիտասարդաց միության ատենապետ բարեշնորհ Գագիկ սարկավագ Հակոբյանի ձեռքով։*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Վայոց ձորի թեմը, համագործակցելով Վայոց ձորի մարզպետարանի եւ մարզի 8 համայնքների (6-ը՝ խոշորացված) հետ, կորոնավիրուսի հետեւանքով ստեղծված իրավիճակը հաղթահարելու նպատակով մարզի կարիքավոր, 4 եւ ավելի անչափահաս երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքներին ցուցաբերել է պարենային օգնություն[32]։*

---

[31] *Տեմ Բանակի օրվա առիթով կատարվեց Հանրապետական մաղթանք* – https://hetq.am/hy/article/126834, *նաեւ՝ Հանրապետական մաղթանք՝ Բանակի օրվա առիթով. Գարեգին Բ.-ն «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան հանձնեց մի շարք զինվորականների* – https://news.am/arm/news/626124.html *առ 15.07.2023 թ.։*

[32] *Մանրամասն տեմ* - https://vayotsdzoritem.wordpress.com/category/*եղեգնաձորի-տարածաշրջանի-հոգեւոր-հովի/ առ 14.07.2023 թ.։*

*Սահմանպահ խաչիկ բնակավայրին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վայոց ձորի թեմը բարեգործական ձեռնարկումների շրջանակում տրամադրել է 3 տոննա գարու սերմացու։ Խաչիկցիներին գարու սերմացուի տրամադրումը Վայոց ձորի մարզում կորոնավիրուսի հետեւանքները մեղմելուն ուղղված հերթական թիրախային օժանդակությունն էր, որն իրականացվել է թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանի նախաձեռնությամբ[33]։ Կորոնավիրուսի հետեւանքով ստեղծված իրավիճակը հաղթահարելու նպատակով Մայր Աթոռի եւ Վայոց ձորի թեմի կողմից Ջերմուկ համայնքի անապահով շուրջ 45 ընտանիքներին, որոնք նախորդ փուլում ծրագրից դուրս էին մնացել, արդեն 2-րդ փուլով տրամադրվել են 30-կիլոգրամանոց սննդի փաթեթներ[34]։*

*Վայոց ձորի թեմի բազմերախտ ձեռնարկումներից էր 2020 թ. Արցախյան դժնդակ պատերազմի օրերին Արցախից տարագրված ընտանիքներին Վայոց ձորի թեմապատկան կառույցում ապահով ապաստան եւ սնունդ տրամադրելու գործը[35]։*

*Վայոց ձորի թեմի կրթական-լուսավորական կյանքի նշանակալից իրադարձություններից են մարզի տարածքում պարբերաբար կազմակերպվող վերապատրաստման դասընթացները մարզի հանրակրթական դպրոցներում Հայոց Եկեղեցու պատմություն դասավանդող ուսուցիչների համար։ Այդպիսի հերթական վերապատրաստման դասընթացներից մեկն էլ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի համագործակցությամբ 2020 թ. փետրվարի 20-ին Եղեգնաձորի «Գիտելիք» համալսարանում կազմակերպված Վայոց ձորի մարզի «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի (ՀԵՊ) ուսուցիչների վերապատրաստման համաժողովն էր, որին մասնակցում էին նաեւ Վայոց ձորի թեմի հոգեւորականները[36]։*

---

[33] *Տե՛ս Վայոց ձորի թեմը սահմանապահ խաչիկ բնակավայրին տրամադրեց 3 տ գարու սերմացու* – https://vayotsdzoritem.wordpress.com/2020/04/14/վայոց-ձորի-թեմը-սահմանապահ-խաչիկ-բնակ/ *առ 30.06.2023 թ.։*

[34] *Տե՛ս «Աջակցություն Ջերմուկ համայնքի սոցիալապես անապահով (45) ընտանիքներին»՝* https://vayotsdzoritem.wordpress.com/category/ջերմուկի-տարածաշրջանի-հոգեւոր-հովիվ/ *առ 30.06.2023 թ.։*

[35] *Արցախից ժամանած ընտանիքները ապահով ապաստան են ստացել Վայոց ձորի թեմապատկան կառույցում* - https://vayotsdzoritem.wordpress.com/2020/10/21/արցախից-ժամանած-ընտանիքները-ապահով-ա/ *առ 30.06.2023 թ.։*

[36] *Տե՛ս «Վայոց ձորի մարզի «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթաց»* – https://vayotsdzoritem.wordpress.com/2020/02/21/վայոց-ձորի-

*Վայոց ձորի մարզում կազմակերպվող հրաշալի ու մարդաշատ միջոցառումներից է Նորավանքի ուխտի օրը։ Մեծահռչակ վանական համալիրի ուխտի օր է հռչակվել Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակին։ Այդ օրը, բացի ավանդական ուխտի սուրբ պատարագից, մատաղօրհնեքից ու հյուրասիրությունից, տեղի են ունենում գեղարվեստական բազմաբնույթ միջոցառումներ՝ համերգ, ցուցահանդես-վաճառք, մրցելույթներ, զվարճախաղեր ու այլ հանդիսություններ, վանական համալիրի տարածքի մաքրման ու բարեկարգման աշխատանքներ*[37]*։*

*Այսպիսով՝ 1991 թ. հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունում հայկական եկեղեցական ճարտարապետությունը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց։ Ժամանակակից հայ ճարտարապետներն ու վարպետ-շինարարները, կիրառելով նոր միջոցներ ու եղանակներ, լուծումներ ու մտահղացումներ, նորակառույց եկեղեցիները, այդ թվում նաեւ Վայոց ձորի մարզի եկեղեցիները, բացառապես նախագծում եւ կառուցում են՝ պահպանելով ու զարգացնելով հայկական միջնադարյան եկեղեցական ճարտարապետության լավագույն ավանդները։ Վայոց ձորի թեմի նորակառույց եկեղեցիներում քահանայագործող՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նվիրյալ հոգեւորականները ներգրավված են ու իրենց գործուն մասնակցությունն են ունենում մարզի հասարակական ու ներհամայնքային կյանքի տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքներին։*

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Վայոց Ձորի մարզ, եկեղեցի, եկեղեցական ճարտարապետություն, մատուռ, Սյունիքի ճարտարապետական դպրոց, Վայքի Սուրբ Տրդատ եկեղեցի, Մալիշկայի Սուրբ Աննա եկեղեցի, Աղավնաձորի Սուրբ Մարիամ եկեղեցի, Մարտիրոսի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի, Գնդեվազի Սուրբ Եղիշե մատուռ, Ելփինի Սուրբ Սարգիս եկեղեցի, Կեչուտի Սուրբ

մարզի-հայոց-եկեղեցու-պատմ/ *առ 30.06.2023 թ.։*

[37] *Տե՛ս «Կանաչ կիրակին՝ Նորավանքի ուխտի օր»* – https://vayotsdzoritem.wordpress.com/2019/05/06/կանաչ-կիրակին՝-նորավանքի-ուխտի-օր-4/ *առ 30.06.2023 թ.։*

Գայանե մատուռ, Ջերմուկի Սուրբ Գայանե եկեղեցի, Ռինդի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի:

## РЕЗЮМЕ

В истории средневекового армянского церковного зодчества архитектурная школа Сюника занимает поистине почетное место с ее талантливыми зодчими, мастерами-строителями и мастерами хачкаров. Представители этой архитектурной школы оставили бессмертную память в монастыре средневекового армянского церковного зодчества и подняли армянское церковное зодчество на новый уровень.

В 1991 году, позже в новой независимой Республике Армения, армянская церковная архитектура пережила возрождение и новый период роста. Современные армянские архитекторы и мастера-строители продолжают лучшие традиции средневековой армянской церковной архитектуры, применяя новые технологии, решения и идеи при строительстве новых церквей, в том числе церквей Вайоцдзорского региона.

В этой статье мы представляем новопостроенные церкви и часовни Вайоцдзорской области Армении (церковь Св. Тиридата в Вайке, церковь Св. Анны в Малишке, церковь Св. Мариам в Агавнадзоре, церковь Св. Мариам Аствацацин в Мартиросе, церковь Св. Гаяне в Джермуке, часовня Св. Гаяне в Кечуте, часовня Св. Егише в Гндевазе, церковь Св. Саргиса в Елпине, церковь Св. Мариам Аствацацин в Ринде). В статье представлены архитектурные формы вышеназванных церквей и часовен, история строительства и другие сопутствующие вопросы.

## SUMMARY

In the history of the medieval Armenian Church architecture, the architectural school of Syunik has a truly honorable place with its talented architects, master builders and cross-stone (khachkar) masters. Representatives of this architectural school left an indelible mark on the medieval Armenian church architecture and raised it to a new level.

# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (2000 – 2021 ԹԹ.)

1. ՎԱՅՔԻ Ս. ՏՐԴԱՏ ԵԿԵՂԵՑԻ
2. ՋԵՐՄՈՒԿԻ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻ
3. ԿԵՉՈՒՏԻ Ս. ԳԱՅԱՆԵ ՄԱՏՈՒՌ
4. ՄԱԼԻՇԿԱՅԻ Ս. ԱՆՆԱ ԵԿԵՂԵՑԻ
5. ԱՂԱՎՆԱՁՈՐԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
6. ՄԱՐՏԻՐՈՍԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
7. ԳՆԴԵՎԱԶԻ Ս. ԵՂԻՇԵ ՄԱՏՈՒՌ
8. ԵԼՓԻՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ
9. ՌԻՆԴԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

In 1991, later in the newly independent Republic of Armenia, the Armenian church architecture experienced a revival and a new period of growth. Contemporary Armenian architects and master builders continue the best traditions of the medieval Armenian church architecture, applying new technologies, solutions, and ideas in the construction of new churches, including those in the Vayots Dzor region.

In this article, we present the newly built churches and chapels of the Vayots Dzor region of Armenia (St. Tiridates Church in Vayk, St. Anna Church in Malishka, St. Mariam Church in Aghavnadzor, St. Mariam Astvatsatsin Church in Martiros, St. Yeghishe Chapel in Gndevaz, St. Sarkis Church in Yelpin, St. Gayane Chapel in Kechut, St. Gayane Church in Jermuk, St. Mariam Astvatsatsin Church in Rind). In the article, we present the architectural forms of the above-mentioned churches and chapels, the history of construction and other related issues.